

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2011թ. սեպտեմբերի 19-20ը ՀՀ ԱՎԾ Նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Քիշինկում (Մոլդովա) կայացած «ԱՊՀ վիճակագրական համակարգերի ռազմավարական և կառավարման հիմնադիրները» խորագրով սեմինարին և ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 46-րդ նիստին,
- ✓ 2011թ. սեպտեմբերի 18-25ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի բաժնի պետ Լ. Հարությունյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը մասնակցել են ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Մարդահամարի տվյալների օգտագործմամբ ոչ ագրեգացված վիճակագրական տվյալների ստացման մոտեցումները և մեթոդները» խորագրով կլոր սեղանին,
- ✓ 2011թ. սեպտեմբերի 27-28ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած «Հազարամյակի զարգացման առաջին նպատակը՝ աղքատության և զբաղվածության ցուցանիշներ» թեմայով տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2011թ. սեպտեմբերի 25 ից - հոկտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել է ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած «Միջազգային առևտրի վիճակագրություն 2010թ. ապրանքների միջազգային առևտրի իրականացում և գլոբալ ֆորումի ավարտում» խորագրով սեմինարին,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 18-21ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած բնապահպանական ցուցանիշների սահմանման, հաշվառման ու զեկույցներում դրանց օգտագործմանն առընչվող հարցերով բնապահպանների և վիճակագիրների միացյալ խորհրդակցությանը և աշխատանքային նիստին,

- ✓ 2011թ. հոկտեմբերի 24-28ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Էներգետիկայի վիճակագրություն» խորագրով սեմինարին,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 10-13ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Ստամբուլում (Թուրքիա) կայացած «Սպառողական գների ինդեքս» խորագրով սեմինարին,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 18-19ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Կրակովում (Լեհաստան) կայացած «Եվրոպական վիճակագրական համակարգերի զարգացումն Արևելյան գործընկերության շրջանակում. ուղղությունները և ռազմավարությունը» խորագրով սեմինարին,
- ✓ 2011թ. հոկտեմբերի 26-27ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Անթալիայում (Թուրքիա) կայացած «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով սեմինարին: